

Վ. Գ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՃԱՌԱԳԱՅԹԱՍՆԿԵՐԻ ԱՆՏԱԳՈՆԻՍՏԱԿԱՆ
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՈՄԱՏԻ ԲԱԿՏԵՐԻԱԼ
ՔԱՂՑԿԵՐ և ԾԽԱԽՈՏԻ ԶԵԶՈՏՈՒԹՅՈՒՆ
ՀԻՎԱՆԴԻԼՑՈՒՆԵՐԻ ՀԱՐՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՐԱ

Միկրոբանիզմների անտագոնիստական հատկանիշները չափազանց կարևոր նշանակություն ունեն կենդանիների և բուսերի բակտերիալ հիվանդությունների դեմ պայքարելու համար: Այդ տեսակետից առանձնապես մեծ հատաքրքրություն են ներկայացնում ճառագալթասնկերը: Ներկայումս հայտնի են որոշ ճառագալթասնկեր, որոնցից ստացվող անտիբիոտիկ նյութերը բժշկության մեջ կիրառում են գտնել մի շարք հիվանդությունների դեմ պայքարելու համար: Սակայն ճառագալթասնկերից ստացվող այլ անտիբիոտիկ նյութերը բուսերը բակտերիալ հիվանդություններից բռնժելու զործի կազմակերպման համար բռնարուծության մեջ գեռլայն կիրառում չեն գտնել: Դա մասամբ պետք է բացատրել նրանով, որ ճառագալթասնկերի և բուսերի բակտերիալ հիվանդությունների հարուցիչների անտագոնիստական փոխհարմերություններն այլնելի քիչ են ուսումնասիրված, քան ճառագալթասնկերի և մարդկանց ու կենդանիների բակտերիալ հիվանդությունների հարուցիչների անտագոնիստական փոխհարմերությունները: Վերջերս թե՛ մեզ մոտ և թե՛ արտասահմանում ճառագալթասնկերի և բուսերի բակտերիալ հիվանդությունների հարուցիչների անտագոնիստական փոխհարմերերությունների պարզաբանման ուղղությամբ ծավալուն ուսումնասիրություններ են սկսվել:

Մեղ մոտ այլ ուղղությամբ նման հետազոտություններ են տարիներ և տարբերակովի (1935), Բերլոզովալի (1939), Սոլնցեալի (1939) կողմէց, որոնց հետազոտությունների շնորհիվ նոր հեռանկարներ են բացվել անտագոնիստական հատկանիշներ ունեցող բակտերիաների կիրառման միջոցով բուսերի մի շարք հիվանդությունների դեմ պայքարելու զործում:

Անտիբիոտիկ հատկություն ունեցող բակտերիաները ֆիտո-

պաթոգեն սնկերի դեմ պալքարելու համար օգտագործելու հարցը ուսումնասիրել են Պորտերը (Porter, 1924), Բամբերգը (Bamberg, 1930), Վեյդլինգը (Weidling, 1932), Կիսլինգը (Kiessling, 1933) և ուրիշները:

Կրասինիկովը, Միրզարեկյանը և Ասկարովան (1951) անտի-քիոտիկ նյութերը հաջողութիւմը կիրառել են դոմոզով վարակված բամբակենու և ցիտրուսալին բուլսերի բուժման համար:

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Միկրոբիոլոգիայի սեկտորը առաջնակարից մնեն էր, որ սկսեց ճառագայթասընկերից ստացված անտիբիոտիկ նյութերով բուժել հիվանդ բուլսերը:

Միրզարեկյանը (1952), Միրզարեկյանը և Կարապետյանը (1953), հետազոտելով ակտինոմիցեատին ծագում ունեցող անտի-քիոտիկ նյութերի ազգեցությունը ծիրանենու բակտերիալ թառամման և այլ բուլսերը հիվանդություններից բուժելու գործում, ցույց են տալիս, որ այդ անտիբիոտիկ նյութերով հնարավոր է պալքարել բուլսերի մի շարք հիվանդությունների դեմ:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, ճառագայթասնկերը և նրանցից ստացված անտիբիոտիկ նյութերը չափազանց մեծ նշանակություն ունեն մարդկանց, կենդանիների և բուլսերի մի շարք հիվանդությունների դեմ պալքարելու գործում:

Այդ հարցի կարևորությունը հաշվի առնելով, մենք նպատակ ենք գրել ուսումնասիրել ճառագայթասնկերի անտագոնիստական ազգեցությունը բուլսերի բակտերիալ հիվանդությունների մի քանի հարուցիչների վրա:

Այդ նպատակի համար հատկապես օգտագործել ենք տոմատի բակտերիալ քաղցկեղի և ծխախոտի չեզոտության հարուցիչները, նպատակ ունենալով անտիբիոտիկ նյութերի գործնական կիրառմամբ այդ հիվանդությունների դեմ պալքարել դաշտային պայմաններում:

Այս աշխատանքն ընթարկում է 1948—55 թթ. մեր կատարած հետազոտության արդյունքները:

Մեր աշխատանքների ընթացքում Հայկական ՍՍՌ-ի տարբեր տիպի հողերից մեկուսացվել է 1280 շտամ ճառագայթասնկերը, որոնցից 343 շտամ այս կամ այն չափով ազդում են № 209 staph. aureus-ի աճեցողության վրա, իսկ Bact. colii-ի վրա՝ միայն 23 շտամ:

Բուլսերի բակտերիալ հիվանդությունների դեմ աշխատանքներ կազմակերպելու ժամանակ մենք սկզբում ուսումնասիրել ենք հետազոտվող 150 շտամների ճառագայթասնկեր:

Մինչև այս հետազոտություններին անցնելը, ճառագալթասնկերի կուլտուրաները բազմակողմանի ուսումնասիրված են եղել մեր կողմից:

Ֆիտոպաթոգեն բակտերիաներից փորձարկել ենք տոմատի քաղցկեղի հարուցիչ Myc. michiganense, տոմատի աև տոտիկի հարուցիչ Bact. aroideae և ծխախոտի չեչոտության հարուցիչ Bact. tabacum:

Մեր հետազոտությունների առաջին էտապում մենք ուսումնասիրել ենք ճառագալթասնկերի կողմից արտադրվող անտիբիոտիկ նյութերի ազդեցությունը բույսերի բակտերիալ հիվանդությունների հարուցիչների վրա:

Ճառագալթասնկերի կուլտուրաներն աճեցվել են Չապեկի կողմից առաջարկված ադարավին սննդամիջավայրում (ԶԱ) Պետրիի թասերում, որոնք պահպան են տերմոստատի մեջ ջերմության 27°C -ում, որից հետո այսանդից ադարավին փոքր կտորները դրվել են մյուս Պետրիի թասի մեջ տեստ-օբյեկտի վրա:

Այս ուղղությամբ մեր կատարած ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ մեր փորձարկած որոշ տեսակի ճառագալթասընկեր տարբեր ինտենսիվությամբ են ազդում տեստ-օբյեկտ հանդիսացող ֆիտոպաթոգեն բակտերիաների վրա, իսկ որոշ տեսակներ էլ, որպես իներտ օրգանիզմներ, նրանց վրա անտագոնիստական ազդեցություն չեն դորժում:

Ավելի զգայուն են հանդիսացել Myc. michiganense-ի բոլոր 6 կուլտուրաները, որոնք ճաշվել են փորձարկվող A. globisporus, A. globisp. citreus, A. coelicolor, A. violaceus, և A. griseus տեսակներին պատկանող ճառագայթասնկերի կողմից: Bact. aroideae-ն ավելի դիմացկուն է, իսկ Bact. tabacum-ի աճեցողաթյան վրա քիչ թվով ճառագալթասնկեր են ճնշիչ ազդեցություն գործում (աղյուսակ 1, 2):

Ճառագալթասնկերի կողմից արտադրվող անտիբիոտիկ նյութերի ազդեցությունը մենք հաշվի ենք առել նատիվ կուլտուրայում, որի տիտրը Myc. michiganense-ի հանդեպ բավական բարձր է. ավելները բերված են աղյուսակ 3-ում: Որպես պրոդրոցենտներ օգտագործվել են A. globisporus, A. glob. citreus և A. violaceus ճառագալթասնկերի տեսակներին պատկանող տարբեր շտամներ, որոնք մեր փորձներում ակտիվ անտագոնիստներ են հանդիսացել տոմատի բակտերիալ քաղցկեղի հարուցիչի նկատմամբ:

Փորձարկվող ճառագալթասնկերը, մեծ ակտիվություն ունի-

ցող անտիբիոտիկ նլութ ստանալու նպատակով, մենք նախօրոք աճեցրինք հետևյալ կազմու ունեցող սննդամիջավալրում՝

| | |
|---|----------------------|
| Ծորակի ջուր | 1000 սմ ³ |
| K ₂ HPO ₄ | 0,1 գ |
| MgSO ₄ | 0,25 լ |
| NH ₄ NO ₃ | 2,0 գ |
| NaCl | 0,5 գ |
| FeSO ₄ | 0,001 լ |
| CaCO ₃ | 3,0 լ |
| Գլուկոզ | 20,0 լ |
| Գարու էքստրակտ | 50,0 սմ ³ |

Գարու էքստրակտ ստանալու համար մենք վեցըրեցինք 50 գ գարու սերմ, որը փոքրիկ թասերի մեջ ծլեցնելուց հետո ճղմեցինք և նրա վրա ավելացնելով 0,5 լ ջուր, ջրալին բաղնիքում շերմության 80°C-ում այն տաքացրինք 30 րոպե, որից հետո հեղուկը բամբակով ֆիլտրեցինք, ֆիլտրատում ստացված էքստրակտը ավտոկավում 1 մինուլորտային ճնշման տակ ստերիլիզացրինք 15 րոպե։

Աղյուսակ 3

Ճառագայթասնկերի առավել ակտիվ նատիվ կուլտուրաների
հակաբակտերիալ տիտրը

| Ճառագայթասնկերի տեսակները և նրանց շտամների №№-ը | Տեսառայի բարձրացնելու ակտիվ նատիվ կուլտուրաների | | | |
|---|---|---------------------------|---------------|---------|
| | Myc. michiganen se-ի շտամները | № 209 staph. aureus | Bact. coli | |
| | 271 | 583 | | |
| A. globisporus տեսակին պատկանող | | | | |
| 28 | 2187 | 6561 | 59049 | 81 |
| 29 | 2187 | 59049 | 59049 | 81 |
| 148 | 19683 | 19683 | 59049 | 81 |
| A. globisp. citreus տեսակին պատկանող | | | | |
| 140 | 6561 | 6561 | 6561 | — |
| 147 | 2187 | 2187 | 19683 | — |
| A. violaceus տեսակին պատկանող | 1 | 1594323 | 1594323 | 4782969 |


Հայաստանի հողերում, ինչպես տեսնում ենք, քիչ չեն այնպիսի ճառագալթասնկերը, որոնք բուլսերի բակտերիալ հիվանդությունների դեմ պարզաբնու գործում լայն կիրառում կարող են ունենալ:

Երբ մեզ հայտնի դարձավ այն աննդամիշավալը, որտեղ ճառագալթասնկերը բարձր տիտր ունեցող անտիբիոտիկ նյութ են արտադրում, արդեն հեշտ եղավ անտիբիոտիկ նյութով (նատիվ ձևով) տոմատի սերմերը նախ մշակել, ապա ստուգել սերմի արտաքին շերտի և սաղմի մեջ նրա ներծծվելու ինտենսիվությունը և ազդեցությունը սերմերի ծոլունակության վրա:

Փորձի ընթացքում (բոլոր գեղքերում) մենք օգտագործել ենք տոմատի սկրամնոգարեցա տեսակի սերմերը, նկատի ունենալով, որ նա հեշտությամբ է վարակվում տոմատի բակտերիալ քաղցկեզի:

Սերմերի տարրեր հլուսվածքներում անտիբիոտիկ նյութը հալունարերելու համար մենք սերմերն ուսումնասիրել ենք չնորացրած կուլտուրալ հեղուկում 1, 5, 10 և 24 ժամ թողնելուց հետո (աղլուսակ 4): Ալսպիսով, փորձի ընթացքում պարզվեց, որ սերմերը նատիվ հեղուկամ 1 ժամ պահելու դեպքում անտիբիոտիկ նյութը ներծծվում է սերմերի մեջ (նկ. 1), սական որոշ շտամների ճառագալթասնկերի կողմից արտադրվող անտիբիոտիկ նյութերը սաղմի մեջ չեն ներծծվում, նույնիսկ այն դեպքում, երբ սերմերը 24 ժամ պահվում են նատիվ հեղուկում, չնայած որ վերջին դեպքում անտիբիոտիկ նյութը սերմերի արտաքին շերտում միշտ էլ հալունարեր վում է:

Երբ մեզ հայտնի դարձավ տոմատի սերմերի մեջ ճառագալթասնկերի կուլտուրալ հեղուկի ներծծումը, անհրաժեշտություն



Նկ. 1. A. globisporus citreus № 147 շտամի ճառագալթասնկերի կողմից արտադրված անտիբիոտիկ նյութերի ներծծումը տոմատի սերմի արտաքին շերտի և սաղմի մեջ: 1—տոմատի սերմի սաղմը, 2—նույն սերմի արտաքին շերտը, 3—տոմատի սերմի սաղմը և արտաքին շերտը՝ արորած, 4—տոմատի սերմը՝ չարորած:

Աղջուռակ 4

Տանտար սերմերի արտաքին շերտի և սաղմի ժեղարի անորոշութեան մարմարի

ներծածան բնականի պարագաներ

| Զնուրացած կուլուրան հեղում սեղմակ | | Զնուրացած կուլուրան հեղում սեղմակ | | Զնուրացած կուլուրան հեղում սեղմակ | |
|---|---|---|---|---|---|
| աղանձուր տեղունիությունը ժամանակ | | աղանձուր տեղունիությունը ժամանակ | | աղանձուր տեղունիությունը ժամանակ | |
| 1 | | 5 | | 10 | |
| Աղանձուրի մակարդակը | հարաբերական աղանձուրի մակարդակը | աղանձուրի մակարդակը | աղանձուրի մակարդակը | աղանձուրի մակարդակը | աղանձուրի մակարդակը |
| մակարդակը հարաբերական աղանձուրի մակարդակը |
| Ա. globisporus | | | | | |
| մակարդակը հարաբերական աղանձուրի մակարդակը |
| 23 | 59049 | +++++ | +++++ | +++++ | +++++ |
| 29 | 59049 | +++++ | +++++ | +++++ | +++++ |
| 148 | 59049 | +++++ | +++++ | +++++ | +++++ |
| Ա. glob. circus | | | | | |
| մակարդակը հարաբերական աղանձուրի մակարդակը |
| 140 | 6561 | +++++ | +++++ | ---- | ---- |
| 147 | 19983 | +++++ | +++++ | +++++ | +++++ |
| Ա. violaceus | | | | | |
| մակարդակը հարաբերական աղանձուրի մակարդակը |
| 1 | 4782969 | +++++ | +++++ | +++++ | +++++ |
| 130 | 243 | +++ | ++ | ++ | ++ |
| 133 | 729 | +++ | -- | ++ | -- |
| | - | - | - | - | - |
| | | | | | |
| | | | | | |

Կռնություն

զգացվեց որոշել նաև կուլտուրալ հեղուկի ազդեցությունը տոմատի սերմերի ծլունակության և նրանց հնագագա աճման վրա (աղյուսակ 5):

Արդ նպատակով ճառագայթասնկերի կուլտուրալ հեղուկում տոմատի սերմերը պահել ենք 1, 5, 10 և 24 ժամ: Ճառագայթասնկերի կուլտուրալ հեղուկը տոմատի սերմերի ծլունակության վրա բարենալսատ ազդեցություն է գործում, երբ սերմերը այդ հեղուկի մեջ պահպան են 1, 5, 10 նույնիսկ 24 ժամ:

Նույնանման փորձ է դրվել տոմատի բակտերիալ քաղցկեղով վարակված տոմատի սերմերի ծլունակության վրա:

Մեր փորձերը ցույց են տալիս, որ տոմատի քաղցկեղի հարոցիչը գդալիորեն պակասուեցնում է նրա սերմերի ծլունակությունը, իսկ երբ վարակված սերմերը անտագոնիստ ճառագայթասնկերի կուլտուրալ հեղուկով մշակվում են, պաթոգեն բակտերիաների ոչնչացմանը զուգընթաց, սերմերի ծլունակությունը բարձրանում է, ինչպես, օրինակ՝ *A. globisporus citreus* տեսակին պատկանող ճառագայթասնկերի № 147-ը տամը:

Մեր հետազոտած ճառագայթասնկերի կողմէց արտադրվող անտիբիոտիկ նյութերի մեջ քանակությունը տոմատի սերմերի խորը շերտերի մեջ անցնելով, ոչ միայն բացասարար չի ազդում, ալև, ընդհակառակը, երբեմն նպաստավոր ազդեցություն է գործում սերմերի ծլունակության վրա: Այսուհետեւ, մենք տառմիջամբ ենք անտագոնիստ ճառագայթասնկերի կողմէց արտադրվող անտիբիոտիկ նյութերի բուլսի մեջ ներծծվելու և տարրեր օրդանների մեջ աարածվելու ինտենսիվությունն ու նրա նշանակությունը հիմնադր բուլսերի բուժման համար: Այդ նպատակով մենք տոմատը նախօրոք աճեցրինք ստերիլ ավազի մեջ (վերերբրլա բարձրությունը՝ 7—8 սմ), պրանք հանձնով ավազից, արմատները շրով լավ լվանալուց հետո, 2, 24 և 72 ժամ պահեցինք ճառագայթասնկերի կուլտուրալ նատիվ հեղուկում, որմեսզի անտիբիոտիկ նյութը աստիճանաբար արմատներից նարծծվի բուլսերի առանձին մասերից մեջ: Այսուհետեւ այդ բուլսերի արմատները մաքուր չըուլ լվանալուց ու ֆիլտրի թղթով չորացնելուց հետո նրանց առանձին մասերը (արմատ, ցողուն, տերի) ստերիլ ավազությաների մեջ տրությունից անդավորեցինք № 2.9 staph. aureus-ով վարակված պահաժարային սննդարձությունութիւնիների վրա: Փորձի ընթացքում հաշվի առանք բուժական առանձին մասերի շուրջը առաջացած սանրի գոտիները (աղյուսակ 6): Մեր փորձերը ցույց են տալիս, որ

Առաջնական բարելիք կուլտուրան հետ աղջուկի աղջուկի թյունք աղջուկի աղջուկի

սպառագիտ սպառագիտ սպառագիտ սպառագիտ սպառագիտ սպառագիտ սպառագիտ

| Տարբերակ համար և անունը | Տարբերակ համար և անունը | Հեղուկում սպառագիտ սպառագիտ սպառագիտ սպառագիտ սպառագիտ | | | | | | | | | | Տարբերակ համար և անունը | | |
|---|-------------------------------|--|----|----|----|----|---|----|----|----|----|-------------------------------|----|----|
| | | Ալմած սպառագիտ բարձր սպառագիտ (սպառագիտ) | | | | | Հեղուկում սպառագիտ սպառագիտ սպառագիտ սպառագիտ | | | | | | | |
| | | 5 | 10 | 15 | 5 | 10 | 15 | 5 | 10 | 15 | 5 | 10 | | |
| A. globisporus սպառագիտ հարդ | 29 | 59049 | 32 | 98 | 98 | 48 | 98 | 98 | 48 | 88 | 96 | 44 | 80 | 92 |
| | 29 | 59049 | 20 | 98 | 98 | 30 | 80 | 95 | 41 | 71 | 92 | 24 | 52 | 80 |
| | 148 | 59049 | 20 | 98 | 96 | 42 | 98 | 98 | 48 | 91 | 94 | 40 | 98 | 98 |
| A. globisp. citreus սպառագիտ հարդ | 140 | 6561 | 24 | 97 | 97 | 32 | 96 | 96 | 33 | 92 | 96 | 40 | 96 | 98 |
| | 147 | 19693 | 24 | 96 | 96 | 47 | 98 | 90 | 40 | 85 | 85 | 40 | 98 | 97 |
| A. violaceus սպառագիտ հարդ | 1 | 4752269 | 20 | 87 | 87 | 25 | 57 | 94 | 37 | 92 | 97 | 50 | 83 | 95 |
| | 130 | 243 | 36 | 92 | 92 | 55 | 95 | 98 | 40 | 95 | 95 | 50 | 83 | 89 |
| | 133 | 729 | 32 | 96 | 96 | 35 | 55 | 58 | 36 | 97 | 97 | 30 | 78 | 96 |
| Կ ա ն ա մ բ ո ւ լ | | 31 | 90 | 90 | 30 | 90 | 90 | 28 | 80 | 90 | 90 | 27 | 80 | 92 |

Եղանակը պահանջում է առավել շատ ժամանակ և առավել շատ գույք առաջ բերելու համար:

| - | - | - | - | - | | | | - | | | | - | | | |
|-------------------|-------------------|-------------------|-------------------|---|----|-----|---|---|----|-----|---|----|-----|----|---|
| | | | | - | | | | - | | | | - | | | |
| - | | | | - | | | | - | | | | - | | | |
| - | - | - | - | 2 | 24 | 72 | - | 2 | 24 | 72 | - | 2 | 24 | 72 | - |
| - | - | - | - | - | | | | - | | | | - | | | |
| 59049 | 59049 | 59049 | 59049 | + | ++ | +++ | + | + | ++ | +++ | + | ++ | +++ | + | + |
| 19693 | 19693 | 19693 | 19693 | + | ++ | +++ | + | + | ++ | +++ | + | ++ | +++ | + | + |
| 4782969 | 4782969 | 4782969 | 4782969 | + | ++ | +++ | + | + | ++ | +++ | + | ++ | +++ | + | + |
| 243 | 243 | 243 | 243 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| globose spores | globose spores | globose spores | globose spores | + | ++ | +++ | + | + | ++ | +++ | + | ++ | +++ | + | + |
| citreus | citreus | citreus | citreus | + | ++ | +++ | + | + | ++ | +++ | + | ++ | +++ | + | + |
| violaceus | violaceus | violaceus | violaceus | + | ++ | +++ | + | + | ++ | +++ | + | ++ | +++ | + | + |
| globose spores | globose spores | globose spores | globose spores | + | ++ | +++ | + | + | ++ | +++ | + | ++ | +++ | + | + |

ճառագալթասնկերի կողմից արտադրվող անտիբիոտիկ նյութերը բուլսի արմատների միջոցով նրա ալ մասերի մեջ ներծծվելու ինտենսիվությունը տարրեր է:

Ալսպիսով, A. globisporus տեսակին պատկանող № 148 շտամի, A. globisp. citreus տեսակին պատկանող № 147 և A. violaceus տեսակին պատկանող № 1 ճառագալթասնկերի կողմից արտադրվող անտիբիոտիկ նյութերը լավ ներծծվելով արմատների մեջ, այնտեղից էլ արագ տարածվում են ցողովնի ու տերևների մեջ: Այդ ճառագալթասնկերի կուլտուրալ հեղուկում գտնվող անտիբիոտիկ նյութը, եթե նույնիսկ նա նոսրացվում է 1/10 անգամ, 2 ժամը բավական է, որպեսզի ակտիվ նյութը ներծծվի բուլսի մեջ և կուտակվի տերևներում:

Միանգամայն ալ պատկեր են ցուցը տալիս վարդագույն օդալին միցելիաներ ունեցող № 37 շամմի ճառագալթասնկերի կողմից արտադրվող անտիբիոտիկ նյութերը, որոնք տոմատի բուլսի արմատներում փոքր քանակությամբ կուտակվելու հետեւ վանքով արմատներից ցողունների և փերենների մեջ չեն անցնում: Փոքրի արդյունքներից կարևի է եղանակացնել, որ ավելի արդյունավետ է նատիվ հեղուկն օգտագործել կամ առանց նոսրացնելու կամ 1/10 անգամ նոսրացրած:

Ինչպես վերևում նշեցինք, մեր ուսումնասիրած ճառագալթասնկերից շատ քչերն են, որ անտագոնիստական ազդեցություն են գործում ծխախոտի չեղուտություն հիվանդության հարուցիչի վրա: Զնայած դրան, մենք հարկ համարեցինք ուսումնասիրներ՝ Baet. tabacum-ի վրա ճնշիչ ազդեցություն դրույղ թեկուղ արդ փոքրաթիվ ճառագալթասնկերը: Մեր ուսումնասիրության ընթացքում հատկապես ուշադրություն ենք դարձնել այդ ճառագալթասնկերի կողմից արտադրվող անտիբիոտիկ նյութերը ծխախոտի առանձին մասերի մեջ ներծծվելու ինտենսիվության և նրանց նշանակության հետ կապված հարցերին (աղյուսակ 7):

Ինչպես ցուցը են առաջի մեր փորձերը, տարբնը տեսակի ճառագալթասնկերի կողմից արտադրվող անտիբիոտիկ նյութերը ծխախոտի արմատների կողմից ներծծվելու և այստեղից էլ բուլսի մըուս մասի մեջ տարածվելու ինտենսիվությունը նույն է: Ալսպիս, օրինակ, A. globoisporus տեսակի № 28 և A. globisp. citreus տեսակի № 147 շտամների ճառագալթասնկերի կողմից արտակըրփող անտիբիոտիկ նյութերը լավ ներծծվելով արմատների կող-

Ճառագալթականիկ կողմից արտադրվելով անսեփթառիկ նյութերը ժիշտախոսի տարբեր

օլլահեռիկ մեջ ներծծվելու ինտենսիվությունը

| Համար | Տեղական պահանջման կազմակերպություն | Առանց նորացման | Նորացման ազդեցություն | | | Նորացման պահանջման | | | | |
|---|---|---|-----------------------|-----|-----|--------------------|-----|-----|-----|---|
| | | | 2 | 24 | 72 | 1/10 | 2 | 24 | 72 | 2 |
| A. globisporus միակին պատկա- նող 28 | արժամա- ցնող պահանջման կազմակերպություն | արժամա- ցնող պահանջման կազմակերպություն | + | +++ | +++ | + | +++ | +++ | +++ | + |
| A. globisporus միակին պատկա- նող 145 | արժամա- ցնող պահանջման կազմակերպություն | արժամա- ցնող պահանջման կազմակերպություն | + | +++ | +++ | + | +++ | +++ | +++ | + |
| A. globisp. citreus միակին պատկա- նող 147 | արժամա- ցնող պահանջման կազմակերպություն | արժամա- ցնող պահանջման կազմակերպություն | + | +++ | +++ | + | +++ | +++ | +++ | + |
| A. violaceus միակին պատկա- նող 1 | արժամա- ցնող պահանջման կազմակերպություն | արժամա- ցնող պահանջման կազմակերպություն | + | +++ | +++ | + | +++ | +++ | +++ | + |
| Կոնկական (առանց գույքակիւթյան) | | | - | - | - | - | - | - | - | - |

մից, տարածվում են մինչև տերևները։ Այդ նկատելի է նաև այն դեպքում, եթե անտիբիոտիկ նյութերը նոսրացվում են։

Մեր կողմից փորձարկվել է՝ նաև ադարալին սննդամիջավալից անտիբիոտիկ նյութի ներծծման ինտենսիվությունը բուշ-սերի մեջ։ Դրա համար մենք տոմատի սերմերը ցանցինք կովրովցեալի առաջարկած սննդանյութի վրա՝ գլանաձև անոթների մեջ։ Յուրաքանչյուր փորձանոթի մեջ լցրինք հիշյալ սննդանյութից 40 սմ³ և անտիբիոտիկ նյութ պարունակող նատիի հեղուկից՝ 1—10 սմ³ (աղլուսակ 8)։ Մեր փորձերի տվյալներից պարզվում է, որ տարրեր տեսակի ճառագալթասնկերի կողմից արտադրվող անտիբիոտիկ նյութերն ազարալին սննդամիջավալից բուշ-սի մեջ ներծծվում են տարրեր ինտենսիվությամբ։ Սակայն պետք է նշել, որ բուլսի աճման ընթացքում սննդամիջավալրում գտնվող անտիբիոտիկ նյութը դանդաղ է արմատներից ներծծվում բուշ-սի մլուս մասերի մեջ, բացի գրանից, որոշ ճառագալթասնկերի կողմից արտադրվող անտիբիոտիկ նյութերն էլ կուտակվում են գըլխավրապես արմատներում։ Նկատվում է նաև, որ եթե ճառագալթասնկերի կուլտուրալ հեղուկում ավելի շատ անտիբիոտիկ նյութ կա, ապա նա աստիճանաբար կուտակվելով արմատներում, որոշ ժամանակից հետո դանդաղորեն տարածվում է բուլսի ցողունների ու տերևների մեջ։ Սակայն պետք է նշել, որ եթե անտիբիոտիկ նյութերի կոնցենտրացիան սննդամիջավալրում խիստ է լինում, խիստ թուլացնում է բուլսի արմատների աճեցողությունը, որոնք սովորականից ավելի կարճ և հաստ տեսք են ստանում։

Այդ հասկանիշը բացասաբար է անդրադառնում նաև բուլսի վերերկրյա մասերի վրա։ Եթե անտիբիոտիկ նյութերի կոնցենտրացիան թուլանում է, նրա ճնշել ազդեցությունը վերանում է։ Անտիբիոտիկ նյութերի թուլլ կոնցենտրացիայի ճնշել ազդեցությունը նկատվում է ընդհանրապես բուլսի աճման առաջին տասնօրյակում, իսկ հետագալում բոլոր գեղքերում այն աստիճանաբար վերանում է և անտիբիոտիկ նյութերի թուլլ կոնցենտրացիան խթանիչ ազդցություն է գործում բուլսերի աճեցողության վրա։

Ինչպես տեսնում ենք, ճառագալթասնկերի կողմից արտադրվող անտիբիոտիկ նյութերը բուլսերի աճման ընթացքում սննդամիջավալից հեշտությամբ ներծծվում են արմատների կողմից և ալստեղից էլ տարածվում ցողունի ու տերևների մեջ։ Անտիբիոտիկ նյութերն իրենց ալդ հատկանիշի շնորհիվ կարող են լայն

Տարբեկը տեսակի ճառագայթանիցի կողմէի աշխատելով անհիմուտի դյուքը սուսառի բույսը


Հեղ հերժելու բնականիցի կողմէ պահած սննդականի կողմէ առաջարկած սննդականի բույսը

| Հարակալի բանակի տեսակի բառականիցի բառականիցի բառականիցի բառականիցի Հեղ Հեղ Հեղ | Անուբանի նյութի առկայությունը բույսի առջևի ժամանակ | | | | 20 օրից հետո | | | |
|--|--|------------------------------|---|------------------------------|------------------------------|------------------------------|------------------------------|------------------------------|
| | Անուբանի նյութի արժանապահութեան մակարդակը | | Անուբանի նյութի արժանապահութեան մակարդակը | | 15 օրից հետո | | 20 օրից հետո | |
| | արժանապահութեան մակարդակը | արժանապահութեան մակարդակը | արժանապահութեան մակարդակը | արժանապահութեան մակարդակը | արժանապահութեան մակարդակը | արժանապահութեան մակարդակը | արժանապահութեան մակարդակը | արժանապահութեան մակարդակը |
| A. globisporus առասպակա- նող | 4200 12000 | ++ ++ | -- -- | -- ++ | -- -- | -- ++ | -- + | -- -- |
| A. globisporus առասպակա- նող | 1500 6900 | -- ++ | -- + | -- ++ | -- -- | -- ++ | -- ++ | -- ++ |
| A. globisp. citreus առասպակա- նող | 1500 12000 | -- ++ | -- -- | -- ++ | -- -- | -- ++ | -- ++ | -- ++ |
| A. violaceus առասպակա- նող | 1500 6900 | -- ++ | -- ++ | -- ++ | -- -- | -- ++ | -- ++ | -- -- |
| Կոնաբոռ (առանց գարակելու) | 1 | - | - | - | - | - | - | - |

կիրառում գտնել գյուղատնտեսական բլուսերի բակտերիալ հիվանդությունների դեմ պալքարելու գործում (Նկ. 2):

ՎԵՐՅԱՑԱԿԱՐԱ ԵՎ ԴԱՇԱՑԻ ՓՈՐՁԵՐ

Անտագոնիստ ճառագալթասնկերի կողմից արտադրվող անտիբիոտիկ նյութերի ազդեցությունը տոմատի բակտերիալ քաղցկեղի հարուցիչի վրա ստուգիլու նպատակով կազմակերպել ենք վեգետացիոն և դաշտային փորձեր, որի համար տոմատի սածիլների մի մասը վարակել ենք տոմատի բակտերիալ քաղցկեղի հա-



Նկ. 2. Ճառագալթասնկերի կողմից արտադրվող անտիբիոտիկ նյութերի ճնշող ազդեցությունը տոմատի բույսի արմատային սխակեմի վրա: 1, 2—սննդամիջավայրում ավելացված է *A. globisporus* citreus № 147 շտամի արտադրած նատիվ հեղուկ՝ 1 սմ³, 3—նույն նատիվ հեղուկը նոսրացված 1/10 անգամ և ավելացված 1 սմ³, 4—նույն նոսրացված նատիվ հեղուկից ավելացված՝ 0,5 սմ³, 5, 6—սննդամիջավայրում առանց նատիվ հեղուկ ավելացնելու (կոնտրոլ), 7, 8—սննդամիջավայրում ավելացված է *A. globisporus* № 148 շտամի արտադրած նատիվ հեղուկ՝ 1 սմ³:

բուցիչով, իսկ մի մասը չենք վարակել: Վարակված սածիլների մի մասն էլ մշակվել է ուսումնասիրվող անտագոնիստ ճառագալթասնկերի կուլտուրալ նատիվ հեղուկով, որի մեջ նրանք պահպել

Ա Կ Դ Ա Ա Ա Գ Թ

Անտառանիւսոն ճառագայաթթանիքի կողմէց արագութեղող ահանդիրութեղող նյութեցին
աղից ցութթանը տուժատի բախչի թիւալ քաղցինիքի հարցիցին և ըսկքալության

| Փորձական սկզբանն Բարուրել թիւ | Եատիկ ճնշումում պահելուու տեսողությունները ճաճերություն | | 24 | |
|--|---|------------------------------|-------------------------------|------------------------------|
| | 5 | սասացիած պարիքան 0/0-ը | կարակալա- ծության 0/0-ը | սասացիած պարիքան 0/0-ը |
| իոնատուլ (չվարեկված) | 100 | 7,8 | 100,0 | 1,3 |
| Տամանի բակտերիալ քաղցիւթյին բարիցիւով վարակված | 100 | 13,7 | 96,0 | 8,8 |
| Վարակված և № 28 ճառագայաթթանիքին բի կոռլատութալ հեղուկութանիք մասնիկա- թանիքած և № 148 շուամ | 100 | 4,5 | 109,0 | — |
| Նույնիւ, № 147 , Նույնիւ, № 1 , Նույնիւ, № 1 , | 100 | 5,2 | 112,0 | 0,7 |
| Վարակված, բարիցիւով կոռլատութալ կոռլատութալ հա- | 100 | 1,7 | 140,0 | — |
| 100 | 4,9 | 110,0 | — | — |
| Զվարակված, բարիցիւով առաջալիքանիք կոռլատութալ հա- | 100 | 1,0 | 106,0 | — |
| Լույնիւ, № 148 շուամ | 100 | 1,5 | 112,0 | — |
| Լույնիւ, № 147 , Լույնիւ, № 1 , | 100 | 1,8 | 140,0 | — |
| 100 | 1,1 | 118,0 | — | — |

Են 5 և 24 ժամ։ Նատիվ հեղուկը նոսրացվել է 1/2 և 1/5 անգամ։ Սածիները մշակվել են դաշտ տեղափոխելուց առաջ։ Դաշտալին պարմաններում կազմակերպված փորձերի տվյալները բերվում են աղլուսակ 9-ում։ Փորձերի տվյալները ցուց են տալիս, որ անտագոնիստ ճառագալթասնկերի կուլտուրալ հեղուկով մշակված տոմատի բուլսերի բակտերիալ քաղցկեղով վարակվածության աստիճանն զգալիորեն իշնում է և բերքատվությունն էլ բարձրանում։ Ամենից լավ արդյունք է ստացվում A. globose տեսակին պատկանող № 147 շտամի ճառագալթասնկերի կուլտուրալ նատիվ հեղուկով տոմատի սածիները մշակելու գեպքում, տոմատի բերքատվությունը բարձրանում է մինչև 40 և ավելի տոկոսով, իսկ վարակվածության տոկոսն էլ իշնում է 6,1-ի։ Ուսումնասիրվել է նաև նատիրիոտիկ նյութերի ազդեցությունը ծխախոտի չեչոտաթլուն հիվանդության վրա, այն էլ միայն վեգետացիոն անոթներում։ Այդ նպատակով փորձերի համար մենք օգտագործել ենք ծխախոտի ըջրապիզոնա սորտի սածիները, որոնց մի մասը վարակել ենք ծխախոտի չեչոտության հարուցիչով և մշակել ենք ճառագալթասնկերի կուլտուրալ նատիվ հեղուկով, վերջինիս մեջ այն պահելով 3, 15 և 24 ժամ, իսկ մի մասը առանց վարակելու, սրա մի մասն էլ մշակել ենք միայն նույն նատիվ հեղուկով, նպատակ ունենալով պարզել անտիրիոտիկ նյութերի ազդեցությունը ծխախոտի չեչոտաթլան հարուցիչի և բուլսի աճեցողության վրա։

Մեր կատարած փորձերի ընթացքում ծխախոտի չեչոտություն հիվանդություն չի նկատվել (կոնտրոլի համեմատությամբ)։ Այդ մասամբ պետք է բացատրել նրանով, որ տվյալ հիվանդությունն ավելի ցածրուն է արտահարովում, երբ օդի հարաբերական խոնավությունը նպաստավոր է ազդում Bacl. tabacum-ի զարգացման համար։ Այդ հիվանդությունը Արարատլան դաշտավայրի պարմաններում ընդհանրապես երևան չի դալիս, որ հաստատվում է նաև մեր փորձերով։

Մեր փորձերի ընթացքում նկատվել է նաև, որ անտագոնիստ ճառագալթասնկերի կուլտուրալ նատիվ հեղուկը բարերար ազդեցություն է գործում ծխախոտի աճեցողության և տերևակալման պրոցեսների վրա։

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Ց Ո Ւ Ն Ն Ե Ր

1. Հայկական ՍՍՌ-ի տարբեր տիպի հողերում լախորեն տարածված են բուլսերի բակտերիալ հիվանդությունների հարուցիչ-

ների նկատմամբ (հատկապես տոմատի բակտերիալ քաղցկեղի) անտագոնիստական հատկություններով օժտված ճառագալթասնկերը: Առանձնապես այդ հատկությունները դրսեորվում են A. glo-bisporus, A. globosep. citreus, A. coelicolor, A. violaceus & A. gris-seus տեսակներին պատկանող ճառագալթասնկերի մոտ:

2. Ճառագալթասնկերի կողմից արտադրվող անտիբիոտիկ նյութերը լավ ներծծվում են տոմատի սերմերի մեջ և բացասարար չեն ազդում նրանց ծլունակության վրա, որոշ դեպքերում էլ խթանիչ աղբեցություն են գործում նրանց ծլման ու աճեցողության վրա:

3. Փորձարկված նատիվ անտիբիոտիկները նույնպես հեշտությամբ են ներծծվում տոմատի բույսի առանձին օրդանների մեջ և բացասարար չեն ազդում նրանց աճեցողության վրա: Յարրեր նատիվ անտիբիոտիկների մոտ նրանց ներծծման ինտենսիվությունը և բույսի մասերում պահպանվելու տևողությունը տարբեր է:

4. Ճառագալթասնկերից ստացված մի քանի նատիվ անտիբիոտիկներ հաջողությամբ կարող են օգտագործվել տոմատի բակտերիալ քաղցկեղի հիվանդության դեմ պարարելու գործում:

В. Г. Туманян

Антагонистическое действие актиномицетов по отношению к возбудителям бактериального рака томата и рябухи табака

Р е з ю м е

Как известно, антагонистические свойства культур актиномицетов имеют крайне важное значение в деле борьбы с инфекционными болезнями человека, животных и растений.

Нашей задачей являлось изучение культур актиномицетов-антагонистов и выделяемых ими антибиотических веществ с целью использования их для борьбы с БРТ и рябухой табака.

Опыты проводились в лабораторных, вегетационных и полевых условиях в течение 1948—1955 гг.

Результаты исследований показали, что обработка рассады и семян томата и табака антибиотическими вещества-

ми в нативной форме, полученными из различных культур актиномицетов, не оказывает отрицательного действия на всхожесть семян и рост растений. Антибиотики обнаруживаются в зародыше семян томата после погружения их в нативную жидкость культур актиномицетов в течение 1 часа. Подобная обработка в некоторых случаях ускоряет процесс всхожести семян и дальнейший рост растений. Испытанные в опытах нативные антибиотики легко проникают в отдельные органы томатного растения, не оставляя на них отрицательного действия.

В течение 1953—55 гг. проводились опыты на рассаде табака в вегетационных сосудах, а на рассаде томата,— в полевых условиях на фоне искусственного и естественного заражения. Результаты полевых испытаний говорят о полной возможности успешного применения некоторых из испытанных нами нативных антибиотиков актиномицетного происхождения в борьбе с БРТ.

Наилучший результат нами получен при использовании нативной жидкости *A. globisporus citreus* штамм № 147, который дал повышение урожая томата на 40% и снизил процент развития БРТ на 6,1%.

ФИЦИЛЬПРЗПЬ

- Березова Е. Ф. 1939—Бактериальный метод борьбы с грибными болезнями сельскохозяйственных растений, сообщение 1. Бактеризация семян как метод борьбы с болезнями льна. Микробиология т. 8, в. 2, стр. 186.
- Красильников Н. А., Мирзабекян Р. О. и Аскарова С. А. 1951—Применение антибиотиков при некоторых заболеваниях у растений. ДАН СССР, в. 8, стр. 79.
- Мирзабекян Р. О. 1952—Действие микробов-антагонистов и их антибиотических веществ на ряд возбудителей бактериозов сельскохозяйственных культур. Доклады ВАСХНИЛ, в. 5, стр. 34.
- Мирзабекян Р. О. и Карапетян Н. А. 1953—Действие микробов-антагонистов на бактериального возбудителя увядания абрикосовых насаждений. Вопросы сельхоз. и промышл. микробиологии АН Арм. ССР, в. 1 (VII), стр. 87.
- Солнцева Л. И. 1939—О лизисе фитопатогенных бактерий вызываемых *Mycobacteriales*. Микробиология, № 8, в. 6, 700.

- Худяков Я. П. 1935—Литическое действие почвенных бактерий на Fusarium. Бюлл. Моск. О-ва испытателей природы. Отд. Биол. Новая серия, 44, в. 6, стр. 324.
- Bamberg R. H. 1930—A bacterium antibiotic to ustilag Zeae. Phytopathology, 20, 140.
- Kiessling L. E. 1933—Biologische Massnahmen zur Unterdrückung des Kartoffelschorfes, Kühn—Arch., 38, 184.
- Porter C. L. 1924—Concerning the characters of certain fungi as exhibited by their growth in the presence of other fungi, Amer. Journ. of Bot., 11, 168.
- Weidling R. 1932—Trichoderma lignorum as a parasite of other soil fungi, Phytopathology, 22, 837.